Արցախում կայացավ ՀՅԴ 110-ամյակին նվիրված երիտասարդական բանակումը

Օրերս Ստեփանակերտի «Կարկառ» ճամբարում կազմակերպվեց ՀՅԴ Արցախի երիտասարդական միության համաարցախյան առաջին բանակումը: Հանրապետության տարբեր շրջաններից միջոցառմանը մասնակցում էին շուրջ 70 երիտասարդներ: Երեք օր տեւած բանակումը նոր ուժ ու զորություն հաղորդեց երիտասարդներին:

Վիշտ ու ցավ, պատերազմ տեսած սերունդը համախմբվեց մեկ դրոշի ներքո, ազգային գաղափարախոսության շուրջ ազգային դիմագիծն անարատ պահելու ազնիվ ցանկությամբ: Քանզի հայի հոգում անմար է մնացել անթեղված կրակը հայրենասիրությունը, ազատատենչությունն ու պահանջատիրությունը: Այդ գաղափարների իրականացման պատմական ելակետը արցախյան ազատամարտն էր, հանուն որի մատաղվեցին մեր լավագույն տղաները մեզ ու մեր սերունդների իրագործման դատին կտակելով իրենց անավարտ մնացած գործը:

ՀՅԴ 110-ամյակին նվիրված բանակումն ուներ հարուստ ու բազմաբովանդակ ծրագիր. «Հայ Դատ», «Դաշնակցությունն Արցախում», «Արցախի ներկա քաղաքական իրավիճակն ու Դաշնակցության դիրքորոշումը», «ՀՅԴ ծնունդն ու գաղափարախոսությունը» եւ այլ թեմաներ:

Բանակումի ամեն մի օրը նվիրված էր Դաշնակցության հիմնադիրներին Քրիստափոր Միքայելյանին, Սիմոն Զավարյանին եւ Ռոստոմին (Ստեփան Զորյան):

Բանակումի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկան ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Գ.Հայրապետյանը, Արցախի ԿԿ անդամ, ԵՄ-ի կապի պատասխանատու Ս.Ամիրխանյանը, ԼՂՀ ԱԺ ՀՅԴ ֆրակցիայի նախագահ Վ.Բալայանը, ԼՂՀ մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարարի երիտասարդության հարցերով տեղակալ Շ.Սարգսյանը եւ ԱԵՄ-ի վարիչ մարմնի նախագահ Ա.Թահմազյանը:

Դաշնակցության քայլերգի հնչյունների ներքո բարձրացվեցին ՀՀ, ԼՂՀ եւ ՀՅԴ դրոշները:

Բանակումի եռօրյա աշխատանքների ընթացքում դասախոսության թեմաներից զատ մեծ տեղ էր հատկացված մարզական եւ ռազմական միջոցառումներին: Իսկ վերջին օրը կազմակերպվեց մրցույթ, որի հարցերը հիմնականում կազմված էին դասախոսական թեմաներից: Հաղթողներն արժանացան նվերների: Այդ օրը, ՀՅԴ Բյուրոյի անդամ Ալբերտ Աճեմյանի կնքահայրությամբ, կազմակերպվել էր նաեւ երդման արարողություն: Շուրջ 45 երիտասարդներ երդման խոստում տվեցին ՀՅԴ ԱԵՄ-ի շարքերը մտնելու համար:

ՀՅԴ ԱԵՄ-ի ներկայացուցիչները հայտնեցին, որ այսուհետ պարբերաբար կանցկացվեն երիտասարդական բանակումներ հետապնդելով մեկ գերագույն նպատակ ամրապնդել մեր նոր սերնդի ոգին, որի զորությամբ միայն հնարավոր կլինի վերակերտել Հայոց աշխարհը: